

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) միջգերատեսչական խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության հետ (այսուհետ՝ ՅՈՒՆԵՍԿՕ) կրթության, գիտության, մշակույթի, հաղորդակցության ու տեղեկատվության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, հաստատությունների և հասարակական կազմակերպությունների համագործակցության համակարգումն ու ապահովումն է:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանադրությամբ (կանոնադրությամբ), ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցության առաջնային ուղղությունների սահմանումը, նշված համագործակցության Հայաստանի երկամյա ծրագրերի մշակումն ու հաստատումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության առջև որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի հարցերով խորհրդատու հանդես գալը՝ ուղղորդելով և կողմնորոշելով Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գործունեությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում:

3) ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում ընդունված համապատասխան իրավական ակտերի կիրարկումը և տեղայնացումը Հայաստանի Հանրապետությունում ապահովելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

4) քաղաքացիական հասարակության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև համագործակցության ամրապնդմանը նպաստելը:

### III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար՝

1) հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունում որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնական գործընկեր՝ ապահովելով կապն ու համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև:

2) Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ծրագրերի շրջանակներում միջազգային համագործակցության հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ծրագրերին ու նախաձեռնություններին, որոնք ուղղված են կրթության, գիտության, մշակույթի, հաղորդակցության և տեղեկատվության զարգացմանը:

4) հասարակայնության լայն շրջանակներին ներկայացնում և պարզաբանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի նպատակներն ու խնդիրները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և իր գործունեության մասին համապատասխան տեղեկատվություն տարածելու միջոցով:

5) խթանում է կապն ու համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում գործող

պետական ու հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և անհատների միջև՝ վերջիններիս ներգրավելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության մեջ.

6) կապեր է հաստատում և համագործակցություն ծավալում այլ պետությունների՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովների հետ՝ համատեղ իրականացնելով Հայաստանի Հանրապետության համար հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր և միջոցառումներ.

7) անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և հաստատություններին տրամադրում է իր գործունեության մասին տեղեկատվություն և ցուցաբերում է համապատասխան օժանդակություն.

8) ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի և այլ միջկառավարական հանդիպումների շրջանակներում ապահովում է համապատասխան խորհրդատվություն Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող պատվիրակությունների համար.

9) քննարկում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հաստատմանն է ներկայացնում վերջինիս կողմից ֆինանսավորվող նախագծերը.

10) ընտրում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարի հաստատմանն է ներկայացնում բարի կամքի դեսպանների թեկնածություններ.

11) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համատեղ քննարկում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի քարտուղարություն է ներկայացնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան մարմիններում Հայաստանի Հանրապետությունից թեկնածություններ:

5. Հանձնաժողովի բացարձակ իրավասության ներքո է գտնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի խորհրդանիշի տրամադրման գործընթացը:

#### IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, գլխավոր քարտուղարից և անդամներից, ովքեր իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով:

7. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են արտահերթ նիստեր գումարվել հանձնաժողովի նախագահի կամ անդամների երկու երրորդի նախաձեռնությամբ:

8. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

9. Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստից մեկ շաբաթ առաջ:

10. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների սոկայության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և գլխավոր քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների հատուկ գրավոր կարծիքները կցվում են արձանագրությանը:

11. Հանձնաժողովի նախագահի հրավերով՝ նիստին կարող են ներկա լինել այլ մասնակիցներ:

12. Հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խմբեր:

13. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարն է:

#### 14. Հանձնաժողովի նախագահը՝

1) իրականացնում է հանձնաժողովի ընդհանուր ղեկավարումը.

2) հրավիրում է հանձնաժողովի նիստները, նշանակում հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումները, արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված գրագրությունները.

4) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

5) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող այլ գործառույթներ:

#### 15. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) հարցեր է ներկայացնում հանձնաժողով՝ քննարկման.

3) ներկայացնում է առաջարկություններ հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) կատարում է հանձնաժողովի ընդունած ընթացակարգային որոշումները:

16. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարն ի պաշտոնե Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետն է, որը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին.

2) ղեկավարում է հանձնաժողովի քարտուղարության ընթացիկ աշխատանքները.

3) հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ձեռնարկում է միջոցներ՝ հանձնաժողովի ծրագրերի ու գործունեության իրականացումը պատշաճ մակարդակով ապահովելու համար.

- 4) մասնակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի աշխատանքներին.
- 5) ներկայացնում է հանձնաժողովն այլ երկրների ազգային հանձնաժողովների գլխավոր քարտուղարների հանդիպումներում.
- 6) աշխատանքային հարաբերություններ է հաստատում ՅՈՒՆԵՍԿՕ-ի քարտուղարության, ինչպես նաև այլ երկրների ազգային հանձնաժողովների հետ.
- 7) պատրաստում և հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում տարեկան հաշվետվությունները.
- 8) հանձնաժողովի նախագահի հետ միասին ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները.
- 9) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ գործառույթներ.
- 10) կազմում է հանձնաժողովի սիստերի արձանագրությունները.
- 11) ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնակցությամբ և այլ ծրագրերի շրջանակներում կազմակերպության քննարկմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների կողմից մշակված ու հանձնաժողովի քննարկմանը ներկայացված և վերջինիս կողմից հաստատված ազգային, տարածաշրջանային ու միջազգային ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները.
- 12) ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովների և այլ կարևոր հանդիպումների ժամանակ ընդունված որոշումներից բխող առաջարկություններն ու տեղեկատվությունն է ներկայացնում հանձնաժողովին.
- 13) ուսումնասիրում և ամփոփում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում հանդիպումներին մասնակցած Հայաստանի Հանրապետության պատվիրակների հաշվետվությունները, որոնք պետք է ներկայացվեն քարտուղարություն՝ մասնակցի վերադարձից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Սույն կանոնադրության 16-րդ կետում նշված գործառույթները հանձնաժողովի գլխավոր քարտուղարն իրականացնում է հանձնաժողովի աշխատանքային մարմնի քարտուղարության միջոցով, որը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաժինն է, և ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության միջոցով:

18. Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ հանձնաժողովը կարող է ունենալ պատվավոր անդամներ, որոնք սփյուռքի և Հայաստանի Հանրապետության հանրության կողմից ճանաչված, բարձր հեղինակություն ունեցող և բարեգործական գործունեության շնորհիվ հանրության հարգանքը վայելող անհատներ են, ովքեր աջակցում են հանձնաժողովի գործունեությանը և խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են հանձնաժողովի նիստերին:

19. Հանձնաժողովի ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների իրականացման համար ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել ՅՈՒՆԵՍԿՕ-ի բյուջետային և արտաբյուջետային միջոցներից հատկացված գումարները և օրենքով չարգելված այլ միջոցներ: Հանձնաժողովը ֆինանսական միջոցներն օգտագործում է միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակով:

20. Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ ամենամյա հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Կ Ա Ջ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի  
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար  
(հանձնաժողովի նախագահ)

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավար  
(համաձայնությամբ)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ  
(համաձայնությամբ)

Երևանի քաղաքապետ (համաձայնությամբ)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների և արխիվի տնօրեն  
(համաձայնությամբ)

Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական  
ինստիտուտի (Մատենադարան) տնօրեն (համաձայնությամբ)

Հայաստանի Հանրապետությունում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի  
գլխավոր քարտուղար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ